Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

# ՆԵՐՍԻՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻՆ

ՏՓԽԻՍՈՑ·

Ի. ՕՏ
ՐԱԳԻՐՔ

ՏՓԽԻՍ·

1866

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿԵՐ·

ՀԵՊ
1510

Дозволено Цензурою, 17 Іюня 1866 года.
Тифлисъ.
*Цензоръ И. Кайтмазовъ.*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻՆ ՏՓԽԻՍՈՅ.

## ԳԼՈՒԽ Ա.

1999

Հիմնական նախագիծք Տփխիսայ Հայոց Ազգային Հոգեւոր Ներսիսեան Դպրոցի պարունակեալք ի Կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Մատթէոսի յ9-ն յունիսի 1861 ամի համարաւ 327.

---

Արդիւնք Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգեւոր Ներսիսեան Դպրոցի, որք մտանեն ի նմա մինչև ցայժմ, կամ որք մտանելոց են յայսմ հետէ ի կայից, ի զրամագլխոց, յընծայաբերութեանց, ի կոտակաց և յայլոց աղբերաց, պարտին մնալ մշտապէս անձեռնմխելի սեպհականութիւն նորին, և ի գործ դնիլ ի պայծառութիւն և ի յառաջադիմութիւն կրթութեան մանկանց Հայոց։

Շրջան Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգեւոր, Դպրոցի վերաբերութեամբ թուոյ ուսանողաց և աւանդեալ առարկայից, պարտի ընդարձակիլ ըստ չափու եկամտից նորին։

Ամենայն մանկունք Հայոց, որք մտանեն ի Թիֆլիզոյ Հայոց Ազգային Դպրոցն, ունին ստանալ ի նմա զուսումն ձրիաբար, իսկ անտերունջ որքք Հայոց, առաւելապէս յեկեղեցականաց, պարտին մնանիլ ի նոյն իսկ ուսումնարանի ծա-

415ա-60

29. 1512

խուք նորին, և այնոցունց ինոցանէ՝ որք աւարտեալ զընթացս ուսման բարեբարոյութեամբ և դերազանց ընդունակութեամբ, ցանկանայցեն կատարելագործիլի բարձրագոյն ուսումնարանս, տուեալ լինին առ այն օժանդակութիւնք ի գումարաց Դպրոցին ըստ չափու կարելութեան, նախընթաց զիտութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Սինոդի Սրբոյ Էջմիածնի։

Ի թուոյ ուսանողաց Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի կարեն մտանել ի Հոգևոր կոչումն միայն այնոքիկ, որք ըստ ընութեան իւրեանց և ներքին կոչման կարող են լինիլ արժանի սպասաւորք աստուածային սեղանոյ և որք յայտնեսցեն առ այն զյօժարակամ ցանկութիւն իւրեանց, առանց իրիք ստիպմանց և համոզմանց։

Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցն պտրտի լինիլ միշտ ի լիակատար կախման Ծայրագոյն Պատրիարգ Կաթուղիկոսի և Սինոդի Սրբոյ Էջմիածնի։ Վերակաւոր Արք Եպիսկոպոս տեղւոյս պարտի մնալ միշտ ըստ կոչման իւրում առաջին հոգատար և նախագահ խորհրդարանի կառավարութեան Դպրոցին, իսկ այլ անդամք այնր խորհրդարանի պարտին ընտրիլ ի ձեռն հասարակութեան քաղաքիս, ըստ յայտնի արժանաւորութեանց իւրեանց, առանց զանազանելոյ զեկեղեցականս և զաշխարհականս և հաստատիլ ի Ծայրագոյն Կաթուղիկոսէն ամենայն Հայոց։ Թիւ Հոգաբարձուաց կամ Անդամոց խորհրդարանի պարտ է լինիլ, ընդ նախագահութեամբ

վիճակաւորի, երկոտասան։

## ԳԼՈՒԽ Բ.

## Իշխանութիւն և կառավարութիւն Ուսումնարանին.

### Յօդուած 1.

Ծայրագոյն Պատրիարգ կաթուղիկոսն ամենայն Հայոց և Սինոդն Սրբոյ Էջմիածնի իբրև աւանդապահ Հայոց Եկեղեցւոյ, դիտող բարեբարոյութեան, և հոգատար իսկական հոգևոր լուսաւորութեան իւրում ժողովրդեան ունին ընդ լիակատար տեսչութեամբ իւրեանց զազգային Հոգևոր Ներսիսեան Դպրոցն Տփխիսայ։

### Յօդուած 2.

Վեհափառ կաթուղիկոսն ամենայն Հայոց և Սինոդն Սրբոյ Էջմիածնի պահպանելով ընդ հովանաւորութեամբք իւրեանց զշնորհեալս կոնդակաւ Նորին Վեհափառութեան յ9 յունիսի 1861 ամի համարաւ 327 Տփխիսայ Հոգևոր Ներսիսեան Ազգային Դպրոցին զիրաւունս և զհիմնաւորութիւնս մշտապէս անփոփոխելի ըստ բարեհաճ նկատողութեան նոցա և կամ զիջանելով ընդ առաջարկութիւնս կառավարութեան Դպրոցին համաձայն ժամանակի, հանգամանաց և կարողութեան Դպ-

բոցին, թոյլատրէ զընդլայնումն և զկատարելագործութիւն նորին:

## Յօդուած 3.

Նորին Վեհափառութիւնն արժանի առնէ հաւանութեան և հաստատութեան զբոլոր անդամս Հոգաբարձութեան Դըպրոցին, զորս ընտրեն պատգամաւորք հասարակութեան Հայոց Տփխիսայ: Հաստատէ նոյնպէս և զՏեսուչ Դպրոցի, որ ընտրի ի Հոգաբարձութենէ նորին:

## Յօդուած 4.

Հոգաբարձութիւն Դպրոցի ըստ ընտրութեան թեմական Առաջնորդի կարդէ ուսուցիչս հայոց հոգևոր ուսմանց, և զայնմանէ յայտնէ Վեհափառ Կաթողիկոսին ի ծանօթութիւն. իսկ ի դէպս անհամաձայնութեան կարծիք իւրաքանչիւրոցն առաջարկին ի տնօրէնութիւն Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

## Յօդուած 5.

Հոգաբարձութիւն Դպրոցին կարդէ և արձակէ ըստ իւրում նկատողութեան զուսուցիչս Լեզուի և Պատմութեան Հայոց: Իսկ դասական դրեանք սոյն առարկայից նոյնպէս և հոգևոր ուսմանց ենթարկին նախընթաց զննութեան և հաս-

տատութեան Սինոդին Սրբոյ Էջմիածնի ըստ առաջարկութեան խորհրդարանին Հոգաբարձութեան։

## Յօդուած 6.

Ձկամաց Նորին Վեհափառութեան և Սինոդի կախի լուծումն առաքելոյ զզերազանցեալ որդեգիրս վասն կատարելագործութեան ի բարձրագոյն ուսումնարանս ի հաշիւ Դպրոցին։

## Յօդուած 7.

Սինոդն վերաշնէ, ենթարկէ ստուգութեան և եզրափակէ զամենայն հաշիւս Դպրոցին ըստ ամենայն ուսումնական և տնտեսական մասանց։

## Յօդուած 8.

Թեմական Առաջնորդն Հայոց Տփխիսայ է առաջին Հոգաբարձու Դպրոցին, ունելով զիրաւունս հասու լինելոյ ամենայն ներքին և արտաքին հանգամանաց Նորին. բայց չառնելով ինքնին զոր և իցէ տնօրէնութիւն, դարձուցանէ զմտադրութիւն Հոգաբարձութեան Դպրոցին ի նկատեալ յինքենէ առարկայն։

## Յօդուած 9.

Նախագահ Հոգաբարձութեան Դպրոցին իբրև վիճակաւոր

Առաջնորդ թեմին, որոյ տեսչութեան ստորագրին բոլոր ծխական ուսումնարանք Հայոց թեմին, ի հարկաւոր դատեցեալ դէպս հրաւիրէ զանդամս Հոգաբարձութեան հոգալ զբարեկարգութենէ նոյն ուսումնարանաց և օժանդակել նոցին կախեալ ի Հոգաբարձութենէ միջոցք։

## Կառավարութիւն Դպրոցին.

### Յօդուած 10.

Հոգաբարձութիւն Դպրոցին ընդ նախագահութեամբ թեմական առաջնորդին կազմի յերկոտասան անդամոց, որք և հաստատին ի Պատրիարդ Կաթողիկոսէ ամենայն Հայոց։ Տեսուչ Դպրոցին է նոյնպէս անդամ Հոգաբարձութեան, մին ի Հոգաբարձուաց վարէ զպաշտօն դանձապետի ըստ ընտրութեան Հոգաբարձութեան։

### Յօդուած 11.

Ընտրութիւն բոլոր Անդամոց Հոգաբարձութեան Դպրոցին լինի ի ձեռն պատգամաւորաց Հայոց Տփխիսայ յետագայ կարգաւ. ժողովուրդք իւրաքանչիւր եկեղեցեաց Հայոց Տփխիսայ ըստ ծանուցման թեմական Առաջնորդին ժողովելով յեկեղեցիս ընտրեն զերիս պատգամաւորս ի միջոյ իւրեանց, որք և ի նշանակեալ ժամանակի ժողովեալ ի դահլիճ Դպրոցին ձեռն արկանեն ընտրել քուէարկութեամբ չորսամեայ ժամանակաւ

ըստ նախընթաց համաձայնութեան քուէարկելի անձանց, ներկոտասան անդամս Հոգաբարձութեան վասն կառավարութեան Ուսումնական և Տնտեսական մասանց Դպրոցին և զչորս կանդիտատս անդամոց։ Տեսուչ Դպրոցին ընտրի ի Հոգաբարձութենէն և հաստատի ի Պատրիարգ Կաթուղիկոսէ ամենայն Հայոց անորոշ ժամանակաւ։

## Յօդուած 12.

Ի պակասիլ անդամոց Հոգաբարձութեան զտեղի նոցա ունին Կանդիդատք (տեղակալք). իսկ ի դէպս պակասելոյ Կանդիդատաց ընտրին նոր անդամք Հոգաբարձութեան ի ձեռն նոյն իսկ պատգամաւորաց հասարակութեան, որք և պահին դիրաւունս իւրեանց յընթացս չորից ամաց։

## Յօդուած 13.

Յանդամոց Հոգաբարձութեան միայն Տեսուչն ստանայ զռոճիկ ըստ սահմանեալ ցուցակի (չտատ):

## Յօդուած 14.

Հոգաբարձութիւն Դպրոցին ունի զառանձին դիւանատուն բաղկացեալ ի քարտուղարէ, որ և է հաշուապահ և յերկուց գրագրաց։

## Յօդուած 15.

Հոգաբարձութիւնն ունի ընդ տեսչութեամբ իւրով զա-

մենայն առարկայս արտաքին և ներքին մասանց Դպրոցին։

## Յօդուած 16։

Պարտաւորութիւնք նորա են՝

Ա։ ըստ ուսումնական մասին՝

1։ Կազմութիւն կամ վերազննութիւն ձեռ ընթացիկ ուսման և բաժանումն այնոցիկ ըստ դասատանց։

2։ Կազմումն կամ վերազննութիւն դասական գրեանց վասն աւանդելի առարկայից ի Դպրոցին, բաց ի գրեանց Հայոց լեզուի և կրօնագիտութեան, որք ենթարկին զննութեան Սինոդին։

3։ Կարգել և արձակել զամենայն ուսուցիչս իւրով իշխանութեամբ բաց ի յիշատակելոյ ի 4-րդ յօդուածն, զորոց զիմէ առաջարկութեամբ առ Վեհափառ Կաթուղիկոսն և ի Սինոդն Սրբոյ Էջմիածնի։

4։ Ընդունել զաշակերտս ի դպրոցն, այն է՝ զորդեգիրս, զթոշակաւորս և զերթեկս, արժանաւորել զնոսա բարձրացուցանելոյ ի ստորայնոց ի վերին դասատունս, արձակել զնոսա ի դպրոցէն յետ աւարտելոյ զընթացս ուսման կամ յառաջ քան զայն, տալ զատեստատս և զվկայագիրս արձակեալ աշակերտաց։

5։ Կազմել զմատենադարան և զհանդիսարան բնական գիտութեանց վասն Դպրոցին։

6։ Առաջարկել առ Սրբազնագոյն Կաթուղիկոսն զհաշիւս

ըստ ուսումնական մասին Դպրոցին։

Բ. Ըստ անտեսական մասին։

1. Կաղմել, վասն վերազննելոյ, զտարեկան պատկերս ծախուց (սմետս) մտից և ելից Դպրոցին։

2. Ցնօրէնութիւն վասն ստացման արդեանց։

3. Բաժանել դծախս ըստ առարկայից։

4. Առնել զաճուրդս վասն տալոյ զկալուածս Դպրոցին կապալաւ։

5. Առնել զաճուրդս վասն հանդերձելոյ կամ հատուցանելոյ զհարկաւորեալ առարկայս վասն Դպրոցին և կալուածոց նորա։

6. Լուծումն վասն ի ձեռս բերելոյ զառարկայս կարիորս վասն Դպրոցին, որք ոչ ենթարկին աճրդի։

7. Ջննել զհաշիւս մտից և ելից Դպրոցին և կալուածոց նորա, և առաջարկել ի Սինոդն Էջմիածնի զընդհանուր հաշիւ ըստ անտեսական մասին։

## Յ օ դ ո ւ ա ծ 17.

Ի Հոգաբարձութեան քննին և վճռին ամենայն խնդիրք և գործք ըստ ուսումնական մասին և անտեսականին առաւելութեամբ ձայնից, և գրին յօրագրի ընդ ստորագրութեամբ ներկայ գտեալ անդամոց, որոց թիւ չիցէ պակաս քան զկէսն։

## Յ օ դ ո ւ ա ծ 18.

Անդամք Հոգաբարձութեան Դպրոցին պարտին անշուշտ

միանգամ յեսթինեկի ժողովել ի նմա։ Իսկ ի դէպս կարեւոր գաղմել և զառանձին ժողով, և որք չկարիցեն ներկայանալ ի Հոգաբարձութիւնն պարտաւոր են ազդ առնել զայնմանէ գրով Հոգաբարձութեան։

## Յ ո դ ո ւ ա ծ 19.

Թեմական Առաջնորդն Հայոց Տփխիսայ ըստ կոչման իւրում է նախագահ հոգեւոր դպրոցին իրաւամբ մի և կէս ձայնի ըստ ամենայն ընդհանուր գործոց և հարցմանց, որք պարտին վճռիլ առաւելութեամբ ձայնից։ Իսկ ըստ խնդրոց վասն առհասարակ Հայոց կրօնական ուսանց. վասն պատմութեան և լեզուին, նա ունի զիրաւունս դադարեցուցանելոյ զմիաձայն եզրակացութիւն անդամոց Հոգաբարձութեան, պահանջելով, զի Հոգաբարձութիւնն առաջարկեսցէ զայնց ի վճռահատութիւն Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Սինոդի։

## Յ ո դ ո ւ ա ծ 20.

Թեմական Առաջնորդն տեղւոյն, ի բացակայիլ իւրում ի քաղաքէն, նշանակէ ըստ նկատողութեան իւրում զմին յանդամոց Կոնսիստորին ի կատարումն իւրոյ պաշտօնի ըստ պարտաւորութեան նախագահի Դպրոցի, և զայնմանէ ծանուցանէ Հոգաբարձութեան գրով։

## Յ ո դ ո ւ ա ծ 21.

Իրաքանչիւր անդամ ունի իրաւունս վերահասութեան

ամենայն մասանց դպրոցին, բայց չառնելով ինչ յանձնէ իւրմէ ըստ նկատեալ թերութեանցն, հասուցանէ զայնց ի գիտութիւն հոգաբարձութեան։

## Յօդուած 22.

Ցեսուչն Դպրոցին իբրև անդամ կառավարութեան պարտաւոր է՝ հասու լինիլ վասն կատարելոյ ամենայն ուսուցչաց և վերակացուաց զիւրեանց պարտաւորութիւնս, ճիշտ նկատել ի վերայ բարոյականութեան բոլոր աշակերտաց։ Յամենայն աւուր հասու լինի ներքին կացութեան Դպրոցին, վասն լաւութեան կերակրոյ, մաքրութեան հանդերձից և այլոց հանդամանաց նոցա և զնկատեալ պակասութիւնս յուսումնական և ի տնտեսական մասին ընուլ անձամբ, իսկ ի դէպս դժուարանալոյն աղդ առնել հոգաբարձութեան դրով կամ բանիւ ի տնօրէնութիւն նորա։

## Յօդուած 23.

Ընդունելութիւն, պահպանութիւն և ծախք գումարոց և հաշուատուութիւն նոցա առաջի Հոգաբարձութեան են պարտաւորութիւն գանձապահի։

## Յօդուած 24.

Վասն դարմանելոյ զհիւանդս յորդեգրաց և թոշակաւորաց Դպրոցն ունիցի զառանձին հիւանդանոց և զբժիշկ։

### Յօդուած 25.

Մին ի Հոգաբարձուաց ըստ նշանակելոյ ժողովոյ հոգաբարձութեան պարտի միամսեայ ժամանակաւ յամենայն աւուր ներկայանալ ի դիւանատուն Հոգաբարձութեան ստանալ ըզթուղթս և զծրարս, մտեալս յանուն Հոգաբարձութեան և տալ պատասխանել ըստ այնց զեկուցումն ի լուր ժողովոյ հոգաբարձութեանն։ Իսկ զդրամական ծրարս ստանայ յատկապէս գանձապահն և մուծանէ ի պատկանաւոր մատեանս ըստ հրամանագրութեանց հոգաբարձութեանն։

### Յօդուած 26.

Գանձապահի ստորագրի տնտեսն, որ կարգի վասն գնելոյ գկերակուրս և զզգենլիս որդեգրաց, վասն հսկելոյ ի վերայ մաքրութեան հանդերձից, անկողնոց և ննջարանաց նոցա և վասն ամբողջութեամբ պահպանելոյ զամենայն չարժական կայս դպրոցին և ասոյ զհաշիւս յամենայնի գանձապահին։

## ԳԼՈՒԽ Գ.

## ԸՆԹԱՑՔ ՈՒՍՄԱՆ։

### Յօդուած 27.

Ի վերայ հիման կոնդակի Սրբազնագոյն Կաթուղիկոսի 19 յունիսի 1861 ամի № 327, բոլոր հայազգի մանկունք, որք

մտանեն ի Տփխիսայ Հայոց Ազգային Հոգեոր Դպրոցն Ներսիսեան, ստանան ի նմա զուսումն ճրիաքար։ Իսկ աղքատիկ որբք Հայոց, յատկապէս յորդւոց հոգեորականաց, պարտին սնանիլ ի նոյն իսկ Դպրոցին ծախիւք ուսումնարանին։

## Յ ո դ ո ւ ա ծ 28.

Ի Դպրոցն ընդունին և թոշակատու աշակերտք, որք ի հաշիւ ծնողաց և բարերարաց բնակին և սնանին ի Դպրոցին հաւասար որդեգրաց։

## Յ ո դ ո ւ ա ծ 29.

Ընթացք ուսման Դպրոցին պարտի լինիլ հաւասար այնմ, որ սեպհականեալ է հոգեոր Դպրոցաց կամ միջնակարգ ուսումնարանաց, նախադասելով զհայոց հոգեոր ուսումն, որպէս զի ի միջոյ ուսանողաց ելցեն բարեկիրթ և արժանաւոր պաշտօնեայք եկեղեցեաց Հայոց և ուսուցիչք վասն ծխական և զիւղական ուսումնարանաց։

## Յ ո դ ո ւ ա ծ 30.

Աշակերտք ընկալեալք ի դպրոցն պարտին ունիլ ոչ պակաս քան զինն և ոչ առաւել քան զերկոտասան ամս վասն մտանելոյ յառաջին դասատուն։ Առաւել քան զայն հասակաւորսն ընդունել ըստ չափու ուսմանն ի բարձրագոյն դասատունս։

## Յօդուած 31.

Աշակերտք ընկալեալք ի դպրոցն պարտին լինել առողջակազմ մարմնով, որոյ վասն նոքա ենթարկին բժշկական զննութեան ի ներկայութեան Հոգաբարձութեան Դպրոցին։

## Յօդուած 32.

Ընդունելութիւն մանկանց ի դպրոցն լինի ի տարին մի անգամ յամսեանն Օգոստոսի։

## Յօդուած 33.

Դպրոցն ունի զվեց դասատունս բաց ի նախապատրաստականէ։

## Յօդուած 34.

Ծխական ուսումնարանք, որ ի քաղաքին Տփխիսայ, ենթադրին անմիջապէս տեսչութեան Հոգաբարձական խորհրդարանին։

## Յօդուած 35.

Աշակերտք կարեն մնալ զամ մի յիւրաքանչիւր դասատան, կարեն լինիլ և բացառութիւնք ըստ պատճառանաց, զորս յարգելի գտցէ հոգաբարձութիւնն Դպրոցին։

## Յօդուած 36.

Առարկայք ուսմանց են՝

Նախ՝ հոգևոր ուսմունք՝ որք են.

Սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանաց. Քրիստոնէական վարդապետութիւն հանդերձ մեկնութեամբ ծիսից և արարողութեանց Հայաստանեայց ուղղափառ Սուրբ եկեղեցւոյ. Պատմութիւն եկեղեցւոյ Հայոց և ազգային ժողովոց։ Լեզու Հայոց և պատմութիւն գրականութեան. Ռուսաց լեզու և գրականութիւն. Դաղղիացւոց լեզու և գրականութիւն. Լատինացւոց լեզու։ Գիտութիւնք. մատեմատիկայ. Ազգային պատմութիւն. Ընդհանուր պատմութիւն. Պատմութիւն Ռուսաց. Աշխարհագրութիւն Հայաստանի և Ռուսաստանի. Ընդհանուր աշխարհագրութիւն, բնագիտութիւն. Բնական պատմութիւն և առանձին բժշկականութիւն։ Գեղեցիկ վարուեցողութիւն, նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն։

## Յօդուած 37.

Յուսումնական մասին տնօրէնութիւնն ուսմանց և ժամուց ի դաստատունս յանձն լինի ուսումնական խորհրդարանին և հոգատարութեան հոգաբարձութեանն։

## Յօդուած 38.

Դպրոցն ունիցի զուսումնական խորհրդարան ընդ նախա-

գանութեամբ Տեսչի, բոլոր ուսուցչաց, և վերակացուաց վասն նախընթաց կշռադատութեան կարգի և եղանակի ուսուցանելոյ զարհեսաս և հսկելոյ ի վերայ նոցա։

## Յօդուած 39.

Ուսումնական խորհրդարանին պատկանին.

1. Յուցանել զդասական գրեանս և զհնարս կազմելոյ զնոսա կամ ի ձեռս բերելոյ։

2. Բաժանել զառարկայս ուսմանց ըստ ժամանակի և ըստ կարգի ուսուցանելոյ զայնս, նկատմամբ յառաջադիմութեանց, ուսացելոց ի դասատունս։

3. Նշանակել զժամանակս պատրաստութեան դասուց, զկարգ հարցաքննութեանց, զգնահատութիւն հմտութեանց աշակերտաց, արժանի առնել զնոսա փոխիլ ի բարձր դասատուն կամ արձակելոյ զնոսա վասն անընդունակութեանց։

4. Յուցանել զգրեանս վասն գրադարանի զպրոցի, նոյնպէս և զառարկայս գարևորս վասն հանդիսարանի բնական գիտութեանց, նա և ցուցանել զեղանակ և զհնար ի ձեռս բերելոյ զայնս։

## Յօդուած 40.

Ուսումնական խորհրդարանն ժողովի ըստ հրաւիրման Տեսչի։ Ամենայն գիտողութիւնք նորա ի ձեռն նոյն իսկ տեսչի առաջարկին ի վերաքննութիւն Հոգաբարձութեան Դպրոցին և ըստ վճռոյ սորին ածին ի կատար։

№ 103

### Յօդուած 41.

Ընդհանուր տարեկան հարցաքննութիւնք աշակերտաց վասն ուսեալ առարկայից նոցա լինին միանգամ ի տարին ի 1-ն յունիսի ցվերջն, զորմէ նախընթացաբար ծանուցանի ի լուր ամենեցուն ի 1-ն Մայիսի յայտարարութեամբ, որ պարունակեսցէ յինքեան զհաստատեալն ի Հոգաբարձութենէ Դպրոցին զսահմանադրութիւն կարգի և քննութեան առարկայից։

### Յօդուած 42.

Մրցանադիրք (Ստեստատք) վասն աշակերտաց առարտողաց զընթացս ուսման ի Դպրոցին և վկայական վասն արձակելոյ նախքան զաւարտումն ուսման պատրաստին ի Հոգաբարձութենէ նկատմամբ հարցաքննական ցուցակաց, տարեկան թուանշանաց, որոց արժանացեալ են աշակերտք ըստ ուսման և ըստ վարուց։

## ԳԼՈՒԽ Դ.

## Արդիւնք Դպրոցի։

### Յօդուած 43.

Ի վերայ հիման Կոնդակի Սրբազնագոյն Կաթուղիկոսի 19 յունիսի 1861 ամի ամենայն արդիւնք Տփխիսայ Հայոց Ներ-

սիսեան աղգային հոգևոր դպրոցին, որք մտանեն ի նմա մինչև ցայժմ, կամ որք մտանելոց են յայսմ հետէ ի կայից, ի դրամագլխոց, յընծայաբերութեանց, ի կտակաց և յայլոց աղբերաց պարտին մնալ անշեղեալ անձեռնմխելի սեպհականութիւն նորին, և ի գործ դնել ի պայծառութիւն նորա և ի յառաջադիմութիւն կրթութեան հայազգի մանկանց:

## Յ ո դ ո ւ ա ծ 44.

Եղեալ ցարդ արդիւնք դպրոցին, որք նշանակեալ են ի ցուցակի հոգաբարձութեան նորին են. 1. արդիւնք ստացեալք յանշարժ կալուածոց, պատկանելոց դպրոցին: 2. Արդիւնք ստացեալք յուխտատեղեաց եղելոց առ Տփխիս քաղաքաւ. Այս արդիւնք սեպհականեցան դպրոցին կոնդակաւ Սրբազնագոյն կաթուղիկոսին Ներսիսի յ9 Մարտի 1851 ամի:

3 Արդիւնք ստացեալք ի վաճառոյ մոմոց Թիֆլիզոյ Հայոց եկեղեցեաց: Այս արդիւնք ևս սեպհականեցան Դպրոցին վերոյշնանակեալ կոնդակաւ կաթուղիկոսին Ներսիսի:

4. Արդիւնք ստացեալք յինչ ինչ ուխտատեղեաց Հայոց, որք ի սահմանս Վրաստանի և Իմերեթիոյ, նա և ի վաճառոյ մոմոց ի նոյն տեղիս:

5. Ժամանակաւոր ընծայաբերութիւնք:

6. Մուտք ստացեալք ի վճարէ թոշակաւոր որդեգրաց:

## Յ ո դ ո ւ ա ծ 45.

Ամենայն արդիւնք յիշատակեալք ի նախընթաց յոդուածս

պարտին մտանել ամբողջութեամբ ուղղակի ի դանձարան Դպրոցին Թիֆլիզոյ։

## Յ ո դ ո ւ ա ծ 46.

Հոգաբարձութիւն Դպրոցի պարտ է կազմել և պահպանել զմատեան ամենայն անշարժ կալից Դպրոցին, յորում գրեսցին ժամանակագրական կարգաւ ի ձեռս բերելն, մտանելն այնոցիկ ընդ տեսչութեամբ ուսումնարանին, կամ չինութեան յոգուտ Դպրոցին ցուցանելով միանգամայն և զդրաւոր վկայագիրս ի վերայ հման որոց իւրաքանչիւր կալուած մտեալ է կամ ի նորոյ մտանելոց է ի սեպհականութիւն Դպրոցին։

## Յ ո դ ո ւ ա ծ 47.

Հոգաբարձութիւն Դպրոցին տայ դանձապետի իւրում զնարկաւոր հաշուետուսարս յիւրաքանչիւր ամի, զմին ընդհանուր բոլոր առ հասարակ արդեանց և զայլ ըստ իւրաքանչիւր աղբերց արդեանց առանձինն։

## Յ ո դ ո ւ ա ծ 48.

Ամենայն անշարժ կալուածք դպրոցին պարտին տուեալ լինիլ կապալաւ յաճուրդս, նշանակեալս ի Հոգաբարձութենէ Դպրոցին հանդերձ անշուշտ պայմանաւ, զի կապալառուն պահպանեսցէ զայնս միշտ ի լիակատար բարեկարգութեան։

## Յ ո դ ո ւ ա ծ 49.

Զարդիւնս յանչարժ կալուածոց Դպրոցին ստանայ Հոգաբարձութիւնն ի կապալաւորէն ըստ ժամանակաց, նշանակելոց ի դաշնագիրս, դանձապահ Դպրոցին զրէ զայնս ի պատշաճեալ մատեանս և վասն ստացման այնոցիկ սայ դանդողրագիր։

## Յ ո դ ո ւ ա ծ 50.

Արդիւնք դպրոցին ստացեալ յուխտատեղեաց, չուրջ զՏփխիսաւ եղելոց, ժողովին ի ձեռն նշանակեալ ի նոսա ի վիճակաւոր Առաջնորդէն ըստ իւնդրոյ Հոգաբարձութեանն Դպրոցին արժանաւոր քահանայից և հարազատ երեցփոխանաց և յաշխարհական անձանց ըստ ընտրութեան տեղական բնակչաց, և իւրաքանչիւր ուխտատեղեաց սայ Հոգաբարձութիւնս դպրոցին հաշուեմատեան, յորում քահանայն ընդ երեցփոխանին մուծանէ զարդիւնս ի նոյն իսկ ժամու մոանելոյ այնոցիկ, զորս և յիւրաքանչիւր ամիս հասուցանէ առ դանձապահ դպրոցին ստորագրութեամբ նորա ի նոյն իսկ մատեանի վասն ստացման այնոցիկ։

## Յ ո դ ո ւ ա ծ 51.

Արդիւնք Դպրոցին ի վաճառմանէ մոմոց Տփխիսայ Հայոց եկեղեցեաց մտանեն սմբողջութեամբ ի Հոգաբարձութիւնն ըստ յարմարաղատ տնօրէնութեանն նորին։ Իրաւունք վաճառ-

ման այնոցիկ մոմոց ի դլխաւոր պահարանին և յերկուս կըրպակս առ Սուրբ Սարգիս և առ սուրբ Աստուածածին (Կաթուղիկէ) եկեղեցեաւք են այնոքիկ, որք այժմ զոն ի նոյն կրպակս և որք ունին նշանակիլ ի դաշնագրին յականէ յանուանէ։

## Յ օ դ ո ւ ա ծ 52.

Գումարն պատկանեալ դպրոցին ի վաճառոյ մեղրամոմոց պարտի հատանել ի պայմանեալ ժամանակս առ զանձապահ դպրոցին, որ դրելով զայնս ի պատչաճաւոր մատենին տայ զանդորրագիր վասն ստացման այնոցիկ։

## Յ օ դ ո ւ ա ծ 53.

Արդիւնք Դպրոցին ի մանր վաճառմանէ մոմոց յեկեղեցիս Հայոց քաղաքիս մնան ի նոյն իսկ յեկեղեցիս այնու, զի այնոքիկ ի կիր արկցին վասն բանալոյ և պահպանելոյ առ նոքօք զծխական ուսումնարանս և առ ի պատրաստելոյ զմանկունս վասն մատանելոյ ի Դպրոցն Թիֆլիզոյ։

## Յ օ դ ո ւ ա ծ 54.

Ամենայն դրամական ընծայաբերութիւնք յօգուտ դպրոցին, որոց նշանակութիւնք չեն յատկացուցեալք յընծայատուէն պարտին համախուրել ընդ մայր գումարայ Դպրոցին և տուեալ լինիլ յանուն ասկոսեօք յարքունի զանձարան և կամ հաւատարիմ դրամատեարց և կամ ընել զանչարժ կալուածս յօգուտ դպրոցին։

## Յ օ դ ո ւ ա ծ 55.

Ամենայն ժամանակաւոր ընծայարերութիւնք յօդուտ Դպրոցին, թէ դրամականք և թէ նիւթականք յատկացուցեալ նշանակութեամբ յընծայատուն պարտին ի գործ դնիլ ըստ նշանակութեան ընծայատուին :

## Յ օ դ ո ւ ա ծ 56.

Ծնողք կամ բարերարք թոշակաւոր աշակերտաց պարտին հատուցանել ի տարին հարիւր յիսուն մանէթս արծաթոյ :

## Յ օ դ ո ւ ա ծ 57.

Քուտք ի վճարել թոշակաւոր աշակերտաց պարտին մտանել ուղղակի ի Դպրոցն յերկուս նուագս ի տարին անչուշտ յամսեան Յունվարի և Յուլիսի, զորս ստացեալ դանձապահն մուծանէ ի պատշաճաւոր մատեանն, և տայ կամ առաքէ առ վճարողս այնոցիկ դրամոց զանդորրագիր :

## Յ օ դ ո ւ ա ծ 58.

Վասն անընդհատ հսկողութեան ի վերայ ամենայն ազգերաց արդեանց, և վասն անվրէպ մտանելոց այնոցիկ ի դանձարան Դպրոցին, Հոգաբարձութիւնն նորին նշանակէ ինքնէն ընդ տեսչութեամբ անդամոց ըստ անտեսական մասին և դանձապահի Դպրոցին զգործակալս (կոմիսար) հատուցանելով զվարձ վաստակոց նոցա :

### Յօդուած 59.

Ամենայն արդիւնք Դպրոցին յամենայն վերոյգրեալ աղբերաց առանց բացառութեան պարտին մտանել ի գանձարանն Դպրոցին ամբողջութեամբ և առանց ձեռն մխելոյ։ Արդեալ լինի ամենատեսակ ծախսարարութիւն ի ժողովեալ արդեանց նա և սակաւաքանակ կիրառութեամբ վասն շինութեան, կարկատանաց և կամ բարգաւաճելոյ դայերսիկ աղբիւրս առանց վճռոյ Հոգաբարձութեան։

## ԳԼՈՒԽ Ե.

### Խսիք Դպրոցին

### Յօդուած 60.

Ի վերայ հիման կոնդակի վեհափառ Կաթուղիկոսին յ9-էն յունիսի 1861 ամի համարաւ 327, ամենայն արդիւնք Տփխիսայ Հայոց Ազգային Հոգևոր Ներսիսեան Դպրոցին պարտին ի որդ դնել յօդուտ նորա։

### Յօդուած 61.

Հանձայն այսր նպատակի հոգաբարձութիւն դպրոցին կազմէ ի բարեպատեհ ժամանակի զպատկեր ծախուց Դպրոցին վասն առաջիկայ ամի համեմատութեամբ մուտից անցեալ ամի։

### Յօդուած 62.

Ի կազմելն զպատկեր ծախուց պարտ է նախապէս ապա-

հովել զկարևորագոյն պիտոյս Դպրոցին և ապա հոգալ զայլոց բարգաւաճութեանց և յարմարութեանց նորին։

## Յ օ դ ւ ա ծ 63.

Առաջին պիտոյք Դպրոցին են՝

1. Պահպանութիւն տան դպրոցին և ապահովութիւն նորա։

2. Պահպանութիւն ի բարեկարգութեան ամենայն անշարժ կալուածոց Դպրոցին և ապահովութիւն նոցա։

3. Ոճիկ ուսումնական կառավարութեան։

4. Ուսումնական պիտոյք։

5. Պահպանութիւն այժմեան թուոյ որդեգրաց. յորոց երեսունք պահպանին ի հաշիւ Դպրոցին։

Առարկայք բարգաւաճութեան Դպրոցին են՝

1. Նոր շինութիւն կամ յաւելուած ի շինուածս կամ ի կալուածս Դպրոցին։

2. Յաւելումն թուոյ որդեղրաց։

3. Դրաղարան։

4. Թանգարան բնական գիտութեանց։

5. Դասատակերտ վասն գիւղական ցնաեսութեան։

6. Առաքումն ի բարձրագոյն ուսումնարանս զերազանցեալ որդեգրաց, աւարտողաց զընթացս ուսման։

## Յօդուած 64.

Ամենայն ծախք Դպրոցին ըստ ամենայն մասանց պարտին լինիլ վճռով հոգաբարձութեան նորին:

## Յօդուած 65.

Հոգաբարձութիւն Դպրոցին տայ գանձապահին զհաշուէ-մատեանս վասն վերոյիշատակեալ հնգից առաջնակարգ պիտոյից դպրոցին, յորս պիտոյ է մուծանել, ըստ պատկանելոյն, զամենայն ստացեալ գումարս ստորագրութեամբ ստացողաց։

## Յօդուած 66.

Ռոճիկք անձանց ուսումնական կառավարութեան և Դիւանատան դպրոցին են յետագայք՝

| | |
|---|---|
| Տեսչի Դպրոցին ի տարին . . . . . | 1200 ռ. |
| Տնտեսի Դպրոցին . . . . . | 300 |
| Քարտուղարի Հոգաբարձութեան, որ կատարէ նաև զպարտաւորութիւն հաշուապահի . . . . . | 500 |
| Ուսուցչաց վերին երեք դասատանց առ իւրաքանչիւր դաս մի և կէս ռուբլի, իսկ ի ստորին երեք դասատունս և նախապատրաստականին մի ռուբլի | |
| Բժշկին . . . . . | 200 |
| Միոյ աւագ վերակացուի . . . . . | 500 |
| Երից վերակացուաց իւրաքանչիւրոցն . . . . | 300 ռ. |
| | 900 ռ. |

| | |
|---|---|
| Երկուց գրաղրաց առ մին մին . . . . . | 100 ռ. |
| | 200 ռ. |
| Երկուց մանկածուաց առ իւրաքանչիւրն . . . | 100 ռ. |
| | 200 ռ. |
| Միոյ հանդերձապահի . . . . . | 100 ռ. |
| Երից ծառայից առ մին . . . . . | 72 ռ. |
| | 216 ռ. |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ· Աւագ վերակացուն, Տնտեսն, երկու մանկածուքն, հանդերձապահն և ծառայք բնակին յուսումնարանին:

ԾԱՆՕԹ· Ի դէպս բացակայութեան Տեսչի պաշտօն նորա և տուեալ ի նմանէ պաշտօնական յանձնարարութիւնս կատարէ աւագ վերակացուն:

ԾԱՆՕԹ· Տեսուչն պարտի ունել զբնակարան ի Դպրոցին, իսկ ի դէպս անյարմարութեան բնակարանի ի նմին ստանայ զօրինաւորեալ վարձագրամս վասն բնակարանի և զվառելափայտ: Տուչութիւն ուսման վերոյգրեալ անձանց լինի ի վանքեան իւրաքանչիւր ամսոյ զրելով ի մատենին քաղ հաշուոյ յառանձին յօդուածս ստորագրութեամբ ի ներքոյ նոցա ստացողաց:

## Յ օ դ ո ւ ա ծ 67·

Ի վերայ հիման կոնդակի վեհափառ Կաթուղիկոսին 19 յունիսի 1861 ամի համարաւ 327 աղքատիկ որբք Հայոց յատկապէս ի Հսկեռ կոչմանէ պարտին մնանիլ ի նոյն իսկ Դրպրոցին ի հաշիւ նորին իրրև որդեգիրք:

## Յ օ դ ու ա ծ 68.

Հոդաբարձութիւն Դպրոցին կարմէ ինքնին կամ վերադնել զպատկեր ծախուց, ներկայացուցեալ ի Տնտեսէ Դպրոցի վասն սնոդոյ որդեգրաց յառաջիկայ տարին և ձեռն արկանէ ի վաղագոյն անօրէնութիւն ըստ այնմ:

## Գ Լ Ո Ի Խ Զ.

## Հ ա շ ո ւ ա տ ո ւ ա ծ ո ւ թ ի ւ ն Դ պ ր ո ց ի ն

## Յ օ դ ու ա ծ 69.

Ի կառավարութեան Դպրոցին պարտ է պահպանել զանվրէպ հաշիւս ըստ ուսումնական և Տնտեսական մասանց:

## Յ օ դ ու ա ծ 70.

Վասն հաշուատուութեան ըստ ուսումնական մասին և վարուց պարտ է ունել զոպագրեալ անուանական ցուցակս բոլոր աշակերտաց, յորս յիւրաքանչիւր ամսեան Տեսուչ Դպրոցին պարտի նշանակել հանդէպ անուան իւրաքանչիւր աշակերտի ի գծի իւրաքանչիւր առարկայի ուսման զմիջին քաղուած նշանաթուաց, զորս ստացեալ է նա յուսուցչաց և զնշան վարուց:

## Յ օ դ ու ա ծ 71.

Ցամսական նշանաթուաց վասն իւրաքանչիւր աշակերտի

տեսուչն քաղէ ի վանքեան ուսումնական տարեոյն ընդհանուր նշանակս և նշանակէ ի նոյն օրինակ տարեկան ցուցակի:

## Յ ո դ ո ւ ա ծ 72.

Զայսպիսի տարեկան ցուցակս պատրաստէ տեսուչն ստորագրութեամբ իւրով յերկուս հատորս, յորոց մին մնայ ի գործս Դպրոցին, իսկ միւսն առաջարկի ի Հոգաբարձութենէ Դպրոցին ի Սինոդն Սրբոյ Էջմիածնի:

## Յ ո դ ո ւ ա ծ 73.

Վանն հաշուապահութեան ըստ տնտեսական մասին, Հոգաբարձութիւնն դպրոցին տայ ում հարկն է առ իւրաքանչիւր նոր տարին դհաշուեմատեանս վաւերացուցմամբ երկուց անդամոց և հաշուապահին և կնքով Հոգաբարձութեան:

## Յ ո դ ո ւ ա ծ 74.

Ա. ըստ մասից:

1. Զմասեան մեծ վանն ընդհանուր եկամտից: Ի նմին դանձապահ դպրոցին մուծանէ զամենայն գումարս, զորս ստանայ ինքն, ըստ ժամանակի մատնելոյ նոցա առանձին յօդուածովք համառօտ ցուցմամբ զտեսակ գումարաց ուստի կամ յումմէ այնոքիկ ստացեալք են, և որով համարաւ տուեալ է վանն նոցա ապահովագիր, ընդհանուր գումար այսր մատե-

նի լինի ցոյց ընդհանուր եկամտից Դպրոցին և հետեւալ ինմին հաշուատեսութեան։

2. Զմատեանս մտից յիւրաքանչիւր կալուածոց դըպրոցին առանձին, որք առեալ լինին կապալաւ, նշանակելով ի ճակատ իւրաքանչիւր մատենի զհատուօտ քաղուած կռեալ դաշնագրին։ Յայնոսիկ մատեանս մուծանին ըստ պատկանելոյն գումարք, սատացեալք ի կապալառուաց ըստ ժամանակի մտանելոյ նոցա, ցուցանելով զյօդուած ի մեծի մատենին, յորում նոքա գրեալ են։ Ընդհանուր գումար իւրաքանչիւր մատենի լինի ցոյց ուղղութեամբ կամ անուղղութեամբ մտանելոյ եկամտից յայնոցիկ կալուածոց։

3. Զմատեանս եկամտից յիւրաքանչիւր հաստատուն կամ անհաստատ աղբերաց առանձինն։ Յայնոսիկ մատեանս մուծանին գումարք ըստ ժամանակի մտանելոյ նոցա ցուցանելով զյօդուած ի մեծի մատենին, յորում նոքա գրեալ են։

4. Զմատեանս անդորրագրոց։ Յայսմ մատենի պարտ է գրել առանձին յօդուածովք զբովանդակութիւն առեալ անդորրագրոց։

## Յ օ դ ո ւ ա ծ 75.

Բ. ըստ ծախուց։

1. Զմատեան վասն սահմանեալ ռոճկաց ամենայն անձանց եղելոց յուսումնարանին և ի կառավարութեան նորին, որք են՝ տեսուչ, ենանս, ուսուցիչք, վերակացուք, քարտուղարք-դրագիրք, ծառայք և այլն։ Յայսմ մատենի զրին առանձին

յօդուածովք զումարք, որք առեալ լինին ամսոյ յամին իւրաքանչիւր անձին ըստ սահմանեալ կարգին ստորագրութեամբ վասն ստացման այնոցիկ ընդ նոսն իսկ յօդուածով։

2. Զմատեան վասն պահպանութեան ասն Դպրոցին, յորում են առանձին յօդուածովք ծախք եղեալք վասն կահից, վառելեաց, լուսաւորութեան, Ջրոյ և կարկատանաց չինուածոց, ստորագրութեամբ ընդ իւրաքանչիւր յօդուածով կապալառուաց, վաճառողաց կամ բերողաց։

3. Զմատեան վասն ուսումնական նպաստից, յորում պարտին գրել առանձին յօդուածովք ամենայն դնեալ իրք ստորագրութեամբ վաճառողաց վասն ստացման պատկանեալ գրամոց։

4. Զընդհանուր մատեան վասն անողոց որդեգրաց և ընդ նմին զառանձին տետրակս վասն իւրաքանչիւր որոշ ծախուց, այն է՝ հանդերձի, կերակրոյ, անկողնոյ, կարասեաց, պիտոյից խոհարանի և տեղանոյ, վառելեաց, լուսաւորութեան, և ծառայից։ Յայսոսիկ տետրակս պարտին փոխադրիլ ըստ պատկանելոյն ամենայն յօդուածովք յընդհանուր մատենէն վասն ցուցանելոյ զգումարն ծախեալն առ իւրաքանչիւր մասն. ընդ յօդուածովք ընդհանուր մատենին պարտին լինիլ ստորագրութիւնք կապալառուաց կամ վաճառողաց վասն ստացման պատկանեալ նոցա գրամոց։

## Յ օ դ ու ա ծ 76.

Հոգաբարձութիւն Դպրոցին երիցս ի տարին այն է ի 1,

մայիսի, ի 1, սեպտեմբերի, և 3, դեկտեմբերի կարմէ դժողովս ի Ցեղէ և յերկուց այլոց անդամոց իւրոց վասն ստուգելոյ զամենայն ժապաւինեալ մատեանս, տուեալս դանձապետին, զղրամական գումարս և զնիւթական պատկանելիս զպրոցին, որդեգրաց և ծառայից ըստ առաջարկեալ ընդհանուր ցուցակի դանձապետին։

## Յօդուած 77.

Վերադնող ժողովն ստորագրէ զամենայն մատեանս հաւաստի առնելով զայնմանէ, թէ եղիտ նա զամենայն ի կարգի և ուղղութեան կամ բացատրելով զդտեալ անուղղութիւնս մուծանէ ի հոդաբարձութիւնն զընկալեալ ի դանձապետէ ընդհանուր ցուցակն գրելով ի նմին զայն, զոր ինչ գրեալ է ի ստուգութենէ մատենից։

## Յօդուած 78.

Զբոլոր այսպիսի մատեանս մտից և ելից զպրոցին իվանձան տարւոյս ներկայացուցանէ դանձապետն ի Հոգաբարձութիւն զպրոցին հանդերձ ընդհանուր ցուցակաւ, յորում պարտին ցուցեալ լինիլ գումարք իրաքանչիւր մատենի առանձին, ընդհանուր գումար բոլոր եկամտից և ընդհանուր գումար բոլոր ծախուց։

## Յօդուած 79.

Հոգաբարձութիւն Դպրոցին առնէ զստուգութիւն բոլոր այնոցիկ մատենից ի մասին կարգաւ ի կիր արկանելոյ զայնս

և ճշդութեան կատարեալ գործոց և զեղրակացութենէ իւրմէ առաջի առնէ Սինոդին Էջմիածնի ընդ ընդհանուր ցուցակին, որ ստանայ ի դանձապետէն և զպատճէն ցուցակին թողու առ ինքն, զիսկական մատեանս տայ ի Դիւան Հոգաբարձութեանն ի պահպանութիւն։

## Յ ո դ ո ւ ա ծ 80։

Յընթացս ժամանակի եթէ փորձք ցուցցեն զկարևորութիւն յաւելլոյ զնոր պարբերութիւնս յայսմ սահմանադրութեան պարտէ նախքան զկիրառութիւնն առաջարկել զայնմանէ ի հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Սինոդի Սրբոյ Էջմիածնի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0348153



Գինն է 15 կոպեկ։